

# Հայտարարություն «Լոռի» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Նարինե Ավետիսյանի նկատմամբ բռնություն կիրառելու կապակցությամբ

Սեպտեմբերի 29, 2017

2017թ. սեպտեմբերի 28-ի երեկոյան Վանաձորում մասնագիտական պարտականությունները կատարելիս ֆիզիկական բռնության է ենթարկվել «Լոռի» հեռուստաընկերության գլխավոր խմբագիր Նարինե Ավետիսյանը: Նա, տեղեկություն ստանալով, որ հորդառատ անձրեւի պայմաններում քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցուն կից կամրջի վրա ասֆալտապատում է իրականացվում, մեկնել է այդ վայր: Նկարահանումներ կատարելու պահին «Շինպլուս» շինարարական կազմակերպության ղեկավար Տիգրան Նազարյանն իր աշխատակիցների հետ հարձակվել է Նարինե Ավետիսյանի վրա, ոլորել թեւերը, նրան զցել գետնին եւ խլել հեռախոսը:

Մենք՝ ներքոստորագրյալ լրագրողական կազմակերպություններս, ի գիտություն ենք ընդունում, որ միջադեպի փաստով քրեական գործ է հարուցվել: Միեւնույն ժամանակ ստիպված ենք արձանագրել, որ ըստ մեր բազմամյա դիտարկումների՝ տասնյակ այսօրինակ գործեր անարդյունք են մնացել, եւ մեղավորները պատասխանատվության չեն ենթարկվել: Այս միջադեպն էլ նմանատիպ իրավախախտումների՝ անհետեւանք մնալու եւ ձեւավորված անպատժելիության մթնոլորտի արդյունք է: Ընդ որում, առաջին անգամ չէ, երբ իր աշխատանքը կատարելիս Նարինե Ավետիսյանը ճնշման է ենթարկվում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պահանջում ենք.

- ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային վարչությունից՝ սկզբունքայնություն ցուցաբերել եւ անաչառ քննություն իրականացնել միջադեպի բոլոր հանգամանքներին համապատասխան գնահատականներ տալու եւ մեղավորներին պատասխանատվության ենթարկելու համար,
- ՀՀ դատախազությունից՝ պատշաճ վերահսկողություն սահմանել նախաքննության օբյեկտիվությունն ապահովելու նպատակով:

Մենք ուշադիր հետեւելու ենք իրավապահ մարմինների գործողություններին եւ հանրությանն իրազեկելու ենք այս քրեական գործի ընթացքի եւ արդյունքների մասին:

ԽՈՍՔԻ ԱԶՍՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ԵՐԵՎԱՆԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ  
ՄԵԴԻԱ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ  
ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ԱՄՊԱՐԵԶ» ԱԿՈՒՄԲ  
ԲԱԶՄԱԿՈՂՄԱՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ-ՀԱՅԱՍՏԱՆ  
ՀԱՆՐԱՅԻՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՄԲ  
«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ԱՊԱԳԱՅԻ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ՀԱՆՈՒՆ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ» ՀԿ  
ԳՈՐԻՍԻ ՄԱՍՈՒԼԻ ԱԿՈՒՄԲ